ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"3"սեպտեմբերի 2012թ.

№ 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾԱՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թվականի հունիսի 2-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> N102 հրամանով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, հիմք ընդունելով «Ծավի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Ագապի Վարդանյանի գրավոր դիմումը, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2012թ. սեպտեմբերի 4-ից լուծել «Ծավի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ագապի Վարդանյանի հետ 2008թվականի փետրվարի 1-ին կնքված N 7 աշխատանքային պայմանագիրը: Հիմք՝ Ա. Վարդանյանի անձնական դիմումը:

2.2012թ. սեպտեմբերի 4-ից «Ծավի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության ուսուցիչ Յուրիկ Մարտիրոսյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի պաշտոնի համար մրցույթի անցկացումն ու նշանակումը:

Հիմք՝ Յու. Մարտիրոսյանի անձնական դիմումը:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում և հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գրիգորյան Արսեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Զաքարյան Համլետ	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Գևորգյան Վաչե	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ
Վարդանյան Ագապի	«Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող)
Մարտիրոսյան Յուրիկ	«Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (ընդունող)

4.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. սեպտեմբերի 3

ք. Կապան